

պէս կը գրէ²⁴. «Մեղքիսէթ կաթողիկոս էջմիածնի յամի Տեառն 1622ին գրեաց առ Գրիգորիս Փափն ԺԵ. եւ յամի 1623ին առ Փափն Ուռպանոս Ը. զգաւանութիւն կաթողիկէի հաւատոյ, յայտնելով զհնազանդութիւն իւր սրբոյ եկեղեցւոյն Հոռմայ»:

Այս թղթակցութեանց շուրջը հետեւեալ խորհրդածութիւնները տեղի ունեցած են Տարածման Հաւատոյ Ս. Ժողովոյն ԻՖ. Նիստին մէջ զումարուած 1623, Յունուար 10ին²⁵. «Հայոց կաթողիկոսի թղթերուն, որոնց մէջ կաթողիկէ եկեղեցւոյ հետ միութիւն կը խընդրէ, պէտք է պատասխանել յորդորական խօսքերով ի միութիւն հրաւիրելով: Պատասխանը ուղարկելու է Առաքեալներուն, յանձնելու համար կաթողիկոսին. բայց հրահանգ տալու է անոնց, որ նամակը յանձնելէ յառաջ նախ խօսին անոր հետ, իմանալու համար թէ անոր գրած նամակները ճշմարտախօսութեան վրայ յեցած են. եթէ խօսակցութեան ընթացքին երեւան գայ, որ կեղծ են նամակները, պատասխանը պէտք է յանձնել. բայց կարող են, եթէ յարմար նկատեն, յորդորական խօսքերով զանիկա ի միութիւն հրաւիրել»:

Ս. Ժողովի կողմէն Մեղքիսեղեկ կաթողիկոսին գրուած նամակին պատճենն է.

²⁴ Հ. Յ. Տաշեան, Յուլյակ Մխիթ. Մատենադարանի, էջ 111:

²⁵ Acta S. Congr. An. 1622—1625, t. 3.